ԱԼՎԱՐԴ ՔԻԼԱՐՋՅԱՆ

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ (ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Որպես նախաբան նշենք, որ ստորադասական նախադասության մեջ կարևոր նշանակություն ունեն նրա բաղադրիչների շարադասությունը, շաղկապների, շաղկապական բառերի ու հարաբերականների գործածությունը: Կարևոր են նաև գերադաս նախադասության բայի սեռն ու խնդրառությունը, գերադաս և ստորադաս նախադասությունների համաձայնությունը ժամանակային առումով, եղանակային ձևերով և այլն: Ստորադասական կապակցության մեջ որոշակի դեր ունեն ոչ միայն բայերը, այլև վերաբերականները, մակբայները, կապերը և այլն: Ենթակա, ստորոգելիական վերադիր, ուղիղ և անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններ ունեցող ստորադասական կապակցությունների համար առանձնակի նշանակություն են ստանում անձի և իրի, դեմքի, թվի, հոլովի քերականական կարգերը: Մեծ է նաև հնչերանգի դերը:

Սույն աշխատանքում կփորձենք ներկայացնել ուղիղ խնդիր կախյալ (երկրորդական) նախադասություններն՝ ըստ կապակցման տարբեր եղանակների: «Բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապն արտահայտվում է երկու եղանակով՝ բառական և շարահարական»[1]: Ըստ Ա. Պապոյանի և Բադիկյանի՝«ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կապակցությունը լինում է նշույթավոր և անշույթ»[2]:

Անցնենք նշույթավոր կապակցություններին:

1. Յուրաքանչյուր գրական լեզվի բնորոշ է բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցումը շաղկապներով և շաղկապական բառերով: Դրանք «բավականին ձևավորված արտահայտություն են գտել դեռևս հայատառ առաջին գրքի՝ «Աստվածաշնչի» թարգմանության մեջ, նաև հինգերորդ դարի հայ պատմիչների երկերում»[3] Սա նշանակում է, որ մեր լեզուն դեռ հնադարում դիմել է բարդ նախադասություններ կազմելուն շաղկապներով և շաղկապական բառերով: Խոսելով դրանց կապակցման

[1] «Ժամանակակից հայոց լեզու», Ակադ. հրատ., III հատոր, Երևան, 1974, էջ 556:
[2] Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան, 2003, էջ 316:
[3] Բ. Վերդյան, «Բարդ ստորադասական նախադասություն», Երևան, 1970, էջ 44:

դերի մասին՝ լեզվաբան Վ. Առաքելյանը մի հետաքրքիր դիտողություն է անում. «Շաղկապների նշանակությունն այնքան մեծ է, որ միևնույն նախադասությունները, մի բարդության մեջ կապակցվելով այս կամ այն շաղկապով, տարբեր բնույթի բարդություն են կազմում»[4]: Հարցի քննությունը թույլ է տալիս մեզ ասելու, որ ուղիղ խնդիր կախյալ նախադասությունների ձևավորող մասը կազմում են շաղկապական կապակցությունները: Այս առումով մասնավորապես հատկանշական են *որ* և *թե* շաղկապներով կառույցները: Դրանք, հիմնականում ունենալով բացատրական նշանակություն, մեծ մասամբ գործածվում են ուղիղ խնդիր կախյալ նախադասությունների կապակցության ժամանակ: Իհարկե, այս շաղկապները կապակցում են նաև մի շարք այլ բնույթի երկրորդական նախադասություններ:

Արդի մամուլում ավելի շատ գործածվում են *որ*-ով կապակցված ուղիղ խնդիր կախյալ նախադասությունները: Այստեղ կներկայացնենք բոլոր այն բայերը, որոնց պահանջով կազմվել են ուղիղ խնդիր կախյալ նախադասություններ:

I. Մեծ խումբ են կազմում ասացական բայերը, որոնք «հաղորդման, տեղեկատվության նշանակություն են արտահայտում»[5], օրինակ՝ հայտարարել, ընդգծել, հիշեցնել, պնդել, նշել, խոստովանել, բացառել, ասել, ապացուցել, շեշտել, տեղեկացնել, զգուշացնել, կրկնել, ավելացնել, արտահայտել, փաստել և այլն: Դիտարկենք նախադասությունները.

ա) Միաժամանակ պետք է ընդունենք, որ Արևելյան երկրների և Հարավային Կովկասի երկրները զարգացման նոր փուլում են (Իր. Թ. 40, էջ 3):

բ) Զրուցակիցներն անմիջապես նշեցին, որ դա անցանկալի սցենար է (Իր. Թ. 40, էջ 3):

գ) Նա փաստեց, որ այս ընտրապայքարում անհայտ դեմքեր գրեթե չկան (ՀՀ , Թ. 18, էջ 1):

դ) ...Կարծանագրի, որ օրենքի իշխանությունը իսպառ դադարել է գոյություն ունենալ (ՀԺ , Թ. 40, էջ 4):

ե) Ժողովուրդն ապացուցեց, որ ինքն ընկրկող չէ (Իր., Թ. 16, էջ 3):

զ) Նա ասել է, որ, ցավոք, այդ , առկա են խոչընդոտներ (ՀՀ , Թ. 18, էջ 2):

---

[4] Վ. Առաքելյան. «Հայերենի շարահյուսություն», Երևան, 1964, Բ հատոր, էջ 83:
[5] Գ. Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1991, էջ 191

է) Հեղինակը պնդում է, որ ներկայումս Հայաստանի սահմաններից դուրս գտնվում է 750 հզ. մարդ (ՀԺ , Թ. 41, էջ 2):

II. Առանձին խմբով ներկայացրել ենք մտածական և իմացական բայերին լրացնող երկրորդականները, որոնք «նշում են մտածության և իմացության օբյեկտը»[6], օրինակ՝ գրել, ընդունել, կարծել, գիտեմ, ենթադրել, հասկանալ, ըմբռնել, գիտակցել, վստահեցնել, պատկերացնել, եզրակացնել, մտածել, իրականացնել և այլն:

ա) Ես չգիտեմ, թե ինչ արձագանք եք ակնկալում իշխանություններից(Իր. Թ. 14, էջ 5):

բ) Այսօր հստակ պատկերացնում է, թե ինչ է տեղի ունեցել(ՀԺ, Թ. 41, էջ 1):

գ) Շատերը ենթադրում ե, որ 2008-ին գնաճային ճնշումները կարող են թուլանալ (ՀՀ , Թ. 20, էջ 3):

դ) Այդ մարդիկ չգիտակցեցին, թե այսօր ժողովուրդն ինչ է անում(Իր. Թ. 16, էջ 1):

ե) Ես կարծում եմ, որ խոսքը մեզ չէր ուղղված (Իր. , Թ. 16, էջ 3):

զ) Եկեք հասկանանք, թե ինչու չկա(ՀՀ , Թ. 16, էջ 12):

III. Զգալի խումբ են կազմում զգայական ընկալման բայերից (զգալ, տեսնել, նկատել, մոտենալ, մոռանալ, և այլն) կազմված երկրորդականն նախադասությունները.

ա) Բանախոսը նկատեց, որ արդեն որոշ քայլեր արված են(ՀՀ, Թ. 18, էջ 2):

բ) ... Նկատեց, որ հայերը հայերեն չեն խոսում (Իր. , Թ. 14, էջ 7):

գ) ... Ակամա հիշում, ես, որ ահավոր մի ախտանիշով վարակվեց հասարակությունը (Իր. , Թ. 16, էջ 6):

ե) Զգացի, որ վիրահատությունը երկարում է (ՀԺ , Թ. 41, էջ 2):

IV. «Հրաման, խնդիր, ցանկություն արտահայտող»[7] բայերից կարող ենք բերել հետևյալները՝ թույլ տալ, տեղեկացնել, ուզենալ, ցանկանալ, ցույց տալ և այլն:

ա) Մենք միշտ ցանկացել ենք, որ Եվրոպական սահմանը մի օր մոտենա մեզ(ՀՀ , Թ. 20, էջ 4):

բ) Ես պարզապես ուզում եմ, որ այս ռեժիմն այլևս չգործի (ՀՀ, Թ. 20, էջ 3):

---

[6] Գ. Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1991, էջ 192:
[7] Գ. Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1991, էջ 193:

գ) Ցույց են տվել, որ հնարավոր է շատ լավ արդյունքների հասնել(ՀՀ , Թ. 18, էջ 1):

դ) Չէի ուզենա, որ այդ չհաջողված ֆարսը ողբերգություն դառնար մեր ժողովրդի, մեր պետության համար (Իր. Թ. 16, էջ 13):

Իհարկե, բայերի նմանատիպ խմբավորումը չի նշանակում, թե դրանք պահանջում են միայն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ: Վերոհիշյալ բայերից շատերը, պահանջում են տարաբնույթ երկրորդական նախադասություններ, որոնց քննարկմանը այստեղ չենք անդրադառնա: Շաղկապական ուղիղ խնդիր երկրորդականները մեծ մասամբ վերջադաս դիրքով են հանդես գալիս, սակավ դեպքերում՝ միջադաս, երբեմն էլ՝ առաջադաս, երբ անհրաժեշտ է լինում հատկապես շեշտել, երկրորդականների բովանդակությունը կամ երբ արտահայտում են անուղղակի հարցում՝ իր կազմում ունենալով կամ չունենալով հարցական դերանուն.

ա) Թե որքանով էր այդ տեղեկությունը համապատասխանում իրականությանը, փորձեցինք ճշտել (Իր. , Թ. 16, էջ 2):

բ) Թե որ թեկնածուին է սատարելու շարժումը, Ավետիսյանը կհայտարարի (ՀՀ , Թ. 20, էջ 4):

գ) Թե կոնկրետ ինչպիսին է լինելու այդ քաղաքական լուծումը, հիշյալ բանաձևը չի մատնանշում (Իր. , Թ. 14, էջ 6):

դ) Թե կոնկրետ ինչ արդյունքներով կարտահայտվի այս ամենը, մենք դեռ կներկայացնենք (Իր. , Թ. 14, էջ 13):

Անդրադառնանք մի կարևոր հարցի ևս: լեզվաբանության մեջ ասացական – մտածական- իմացական մի շարք բայերով դրված նախադասությունների մասին կայ տարակարծություններ: «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ձեռնարկում այս մասին գրված է.«Եթե գերադաս բաղադրիչում գործածվում է ներգործական սեռի ասացական – մտածական խնդրառու բայ, և բացակայում է հարաբերյալը, ստորադաս բաղադրիչը կարող է ընկալվել և որպես սեռի՝ ուղիղ խնդիր, և որպես բայիմաստի՝ վերաբերության խնդիր»*: Լեզվաբան Գ. Գարեգինյանը սրանք համարում է ուղիղ խնդիր երկրորդականներ: Մենք ևս, հետևելով նրան, նման կառույցները համարել ենք ուղիղ խնդիր երկրորդականներ:

---

* Ա. Պապոյան, Բադիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան, 2003, էջ 328:

2. Ստորադասական կապակցության մեջ մեծ է հարաբերական ու հարաբերյալ բառերի դերը, «բոլոր հարցական բառերը, որոնք, կորցնելով իրենց նշանակությունը, գործ են ածվում իբրև հարաբերական կամ շաղկապական բառեր և կապում են երկրորդական խոսքը գլխավորի հետ»[9]: Բարդ ստորադասական նախադասության մեջ հարաբերական բառերը, կատարելով շաղկապի դեր, հավասարվում են նրանց իրենց շարահյուսական դերով, մնացած բոլոր հատկանիշներով, մասնավորապես նյութական նշանակությամբ տարբերվում նրանցից: Ի տարբերություն շաղկապների, հարաբերականները կատարում են երկրորդական նախադասության որևէ անդամի պաշտոն: Դրանք մեծ մասամբ դերանուններ են կամ անորոշ նշանակություն ունեցող բառակապակցություններ (այն, այնպիսի, այնտեղ, այն ժամանակ, մի բան և այլն), որոնք իմաստավորվում են երկրորդական նախադասությունների միջոցով:

Քերականագիտության մեջ հարաբերյալ են համարվում, այն բառերը (մեծամասամբ ցուցական դերանուններ), որոնք հենց թելադրում են համապատասխան հարաբերական բառերի գործածություն երկրորդական նախադասության մեջ: Հարաբերյալներն ու հարաբերականները ունեն կապակցական դեր, ըստ որում ելակետը հարաբերյալն է, որն ազդարարում է գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդական նախադասության հաջորդումը և մյուս կողմից թելադրում իրեն համապատասխան որևէ հարաբերական: Այսպես առաջանում են դրանց զուգորդումները՝ այն – ինչ, նա - ով, այն ամենը – ինչ, այնպես – ինչպես և այլն:

Երբ գլխավոր նախադասության օբյեկտը, որը նկարագրվում է երկրորդական նախադասության մեջ, անձ է, որպես կապակցության միջոց գործածվում են *ով* (*ով որ*), երբեմն նաև *որ* հարաբերականները: Այս դեպքում գլխավորի մեջ առկա է լինում հարաբերյալ: Որպես այդպիսիք հանդես են գալիս *նրան, նրանց, ամենն մեկին, բոլորին* դերանունները, այսպես՝

ա) Մարդիկ ուղղակի սքրես են ապրում և հետո չեն ներում նրանց, ում մեղքով այդ ապրումներն ունեցել են (ՀԺ, Թ. 40, էջ 5):

բ) Հիշենք նրանց, ովքեր ընկան այդ մարտում (Իր., Թ. 14, էջ 13):

Եթե այդ նույն գործողությունը վերաբերում է որևէ «առարկայի, իրողության կամ առարկայացված մեկ այլ գործողության, օգտագործվում են ցուցական երրորդ շարքի *այն* և *նրանք*, ինչպես և *նույնը, միևնույնը*

---

[9] Ս. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 609:

դերանունները, բոլորը՝ միայն ուղղական հոլովով»[10]: Տվյալ դեպքում կապակցության միջոց կարող են դառնալ *ինչ, որ* հարաբերականները:
Այս դեպքում գլխավորի մեջ սովորաբար լինում է հարաբերյալ՝ *այն* ցուցական դերանունը և մի քանի որոշյալ դերանուններ՝ *այն ամեն, այն բոլորը, ամեն բան* և այլն:
ա) ... Համարեց այն, որ անցում է կատարվում դեպի... ռազմավարություն (ՀՀ, Թ. 20, էջ 1):
բ) Արդյունքը եղավ այն, որ հեռացավ քաղաքական դաշտից(ՀՀ Թ.20, էջ 3)

«Հարաբերյալի գործածությունը գրեթե կամընտիր է...: Սակայն կարող են լինել նաև այնպիսի կառույցներ, որտեղ հարաբերյալի առկայությունը անհրաժեշտ է»[11]: Իսկ երբ պետք է շեշտել երկրորդականի բովանդակությունը, հարաբերյալը կրկնվում է: Այս դեպքում ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը դրվում է հարաբերյալից հետո, ունենում վերջադաս դիրք: Առաջադաս գործածվում է հազվադեպ, այն էլ չափածո խոսքում: Թերևս սա է պատճառը, որ այդպիսիք մեզ գրեթե չհանդիպեցին:

3. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման մի եղանակ է շարահարությունը, «երբ երկրորդական խոսքերը, որոնք սկզբնապես գլխավորից անկախ խոսքեր են, առանց որևէ կապակցական բառի, նշանակությամբ միայն միանում են գլխավոր խոսքի հետ»[12],- նշում է մեծ հայագետը:

Ժամանակակից հայերենում հաճախ է գործածվում ուղիղ խնդիր երկրորդականների անշաղկապ կապակցությունը: Վերջինիս դեպքում ևս բարդ նախադասության բաղադրիչների միջև լինում են իմաստային նույն հարաբերությունները, ինչ որ շաղկապական կապակցության ժամանակ: Հարկ ենք համարում նշել որ շարահարական կախյալ կապակցությունները շաղկապական և հարաբերական կապակցությունների համեմատությամբ իրենց իմաստային նրբերանգներով, ոճական արժեքով ու նշանակությամբ ունեն խիստ բազմազան բնույթ:
«Շարահարական կապակցությունն ամենից առաջ բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը և գործ է ածվում ոչ միայն խոսակցական լեզվում,

---

[10] Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան, 2003, էջ 316:
[11] Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան, 2003, էջ 316:
[12] Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 609:

այլև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում»[13]: Կապակցումը դրսևորվում է քերականական – շարահյուսական օժանդակ միջոցներով՝ բառերի դասավորությամբ, բարդ նախադասության բաղադրիչների շարադասությամբ, հնչերանգով և այլն:

«Շարահարությամբ կապակցվում են մասնավորապես ասացական, հասկացական իմաստով բայերին լրացնող այն նախադասությունները, որոնց կազմում կա որևէ հարցական դերանուն, որով էլ հենց դրանք արտահայտում են ևնուղղակի հարցում»[14]: Այսպես՝

ա) Պատահաբար չգիտեք՝ով է լինելու ապագա վարչապետը(Իր.Թ.16,էջ 7)

բ) Ժողովուրդը ենթագիտակցորեն զգում է՝ որտեղ է ճիշտը, որտեղ է սխալը (Իր. , Թ. 16, էջ 5):

գ) ... Հաճախ չեն էլ նկատում՝ երբ է վերջանում մի օրը(Հժ¬¬Թ. 40, էջ 6):

դ) Չեն ասում՝ ինչ են պահանջում(Հժ , Թ. 41, էջ 6):

Երբ երկրորդական նախադասությունը վերջադաս է, սովորաբար նրան հարաբերյալ չի համապատասխանում: Այն անմիջաբար կատարում է գործողության ուղիղ խնդրի պաշտոն, օրինակ՝ «Լրագրողներից մեկին հետաքրքրում է՝ այդ դեպքում որքանով է կարևոր մյուս ընդդիմադիրների միավորումը»(ՀՀ , Թ. 20, էջ 3):

Ուղիղ խնդիր երկրորդականները անշաղկապ կապակցության ժամանակ լինում են սովորաբար վերջադաս: Հասկանալի է, որ շաղկապական բառի բացակայության դեպքում սկզբում պետք է հաղորդվի այն նախադասությունը, որի ներգործական սեռի ստորոգյալի պահանջով գործածվում է խնդիր երկրորդական նախադասությունը, օրինակ՝ .

ա) Ես չեմ էլ հասկանում՝ էլ ինչն են ուզում զիջել(Իր. , Թ. 16, էջ 14):

բ) Ես չգիտեմ՝ մեր իշխանությունների իմաստությունը՞, գիտակցությունը՞, թե՞ հայրենասիրությունը չի հերիքում, որ այդ փաստերն օգտագործեն որպես զենք (Իր. , Թ. 16, էջ 14):

գ) Հասկանում էի՝ ոտքի վիրահատություն և այդքան երկա՞ր(Հժ Թ. 41էջ 2):

---

[13] Լ. Եգեկյան «Ոճագիտություն», Երևան, 2003, էջ 330.

[14] Ս. Պապոյան, Խ. Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն», Երևան, 2003, էջ 318: